1 *Ի Թուին ՉԷ։ Ես Գոհարմլիքս,*
2 *Թոռն Համազասպանց, միաբանե-*
3 *ցս Ածածնիս, էտու արդիւնս։ Եւ՝*
4 *հայրս Կիրակոս, առաջնորդ սբ ու-*
5 *խտիս եւ միաբանքս խոստացաք {ի տար}-*
6 *ի տարին Ե պատարագ եւ յետ մա-*
7 *հուան Ը աւր ամբիծք եւ քառաս-*
8 *ու(ն)ք։ Կատարիչքն աւրհնին յԱյ։*



*Նկ. 33. Արձ. № 16։*

Ծանոթություն.— *1. ՉԷ թվականները որևէ նշանով մյուս գրերից բաժանված չեն։*

*2. Գոհարմլիքի տապանաքարը գտնվում է Աստվածածնա ժամատան հատակին (արձ. 81)։*

Տարընթերցում.— *1.* Ջալ Գոհարմլիքս *կարդացել է* Գոհար Բեգս։

*2. 6-րդ տողում* Ե պատարագ Ջալ *կարդացել է* Ե օր։

*3.* Վիմ. *արտագրել է Ջալ-ից և 4-րդ տողի* առաջնորդ *բառից հետո կրճատել է։*